վերցնելով, Դեկտեմբեր 2-ին անցնում է Գորիս։

Այդ միսիայի նպատակն էր՝ Շուշի-Եւլախ, Շուշի-Զանգեզուր միացնող խճուղիները ապահովել ճամբորդների համար եւ ընդհանրապէս խաղաղութիւն ստեղծել շրջաններում։

Զանգեզուր գնացած միսիային յաջողւում է ճանապարհները մի առ ժամանակ ապահովացնել եւ միսիայի թղթերով (անցագրերով) տեղի է ունենում երթեւեկութիւն։

Առաջին անգամ միսիայի թղթով Շուշի է գալիս Շուշուայ գնդի սպաներից գլխ. Յովակ Ստեփանեանը, իր հետ բերելով Զանգեզուրում մնացած (ճանապարհների փակ լինելու պատճառով) Շուշինսկի Պոլկի գանձակեցի եւ ղարաբաղցի զինուորներին։

Ղարաբաղի ազգային մարմինները՝ ի վիճակի չլինելով այդ զինուորներին պահել, նրանց ուղարկում են իրենց տները։

Այդ օրերին Զանգեզուրից Շուշի էր եկել բժիշկ Ռուբէն Տէր Ստեփանեանը եւ Անդրանիկի հրահանգով պիտի անցնէր Բաքու ու նորից վերադառնար Գորիս։

Ճանապարհները երբ մի քիչ ապահովւում են, Զանգեզուրի գիւղացիները մեծ քանակութեամբ իւղ, պանիր, ոչխար էին բերում Շուշի եւ նոյնիսկ Բաքու էլ էին տանում։ Իսկ վերջերում սկսում են զէնքի առեւտրով պարապուել։

Զանգեզուրի մարմինները տեսնելով որ Ադրբէյջանի թաթարները օգտւում են առիթից և եղած կենսամթերքները դուրս են բերում Զանգեզուրից, ինչպէս նաեւ նկատելով որ թաթարները բարձր գներով զէնքեր են գնում գիւղացիներից, որոշում են այլեւս Զանգեզուրից թոյլ չտալ որեւէ ապրանք դուրս բերելու։ Զինավաճառութեան դէմ էլ խիստ միջոցներ են ձեռք առնում։

Երբ Մայոր Գիբոնը, Գորիսից վերադառնում է Շուշի, նորից ճանապարհները վտանգւում են, որովհետեւ Հաջիսամլուի քրդերը, ճամբորդները թալանում էին. այդ պատճառով էլ երթեւեկութիւնը դադարում է։

Ռուբէն Տէր Ստեփանեանը անցնում է Բաքու եւ վերադառնում է Շուշի ճիշդ այն օրերին, երբ Շուշի-Գորիս խճուղին փակուած էր։ Սակայն նա մի բոպէ արհամարհում է ամէն ինչ եւ կառք նստելով Շուշուց մենակ ճանապարհւում է Զանգեզուր։

Բժիշկ Ռուբէնի հետ ես ծանօթ չէի. առաջին անգամ ընկեր Հայրապետ Մուսայէլեանն է ծանօթացնում, այն էլ նրա Գորիս ճանապարհուելու օրը։

Երբ բժիշկը մեզ մնաք բարեաւ է ասում, ես զարմացած հարց էի տալիս. բժի՛շկ, այս օրերին երբ ճանապարհները փակուած են, ինչպէ՞ս էք համաձայնւում մեն-մենակ Հաջիսամլուի քրդերի միջով անցնելու։

Բժիշկը ժպտալով պատասխանում է. «Անդրանիկի անունը բաւական է»։

Եւ այս բառերի տպաւորութեան տակ, ես ու Հայրապետը ճանապարհում ենք բժիշկին, առանց յոյս ունենալու, որ նա ապահով Գորիս կը հասնի։ Սակայն Անդրանիկի անունը, նրան անփորձ Գորիս է հասցնում։

Դեկտեմբերի սկզբներին, Բաքուից երկու անգլիական սպաներ են գալիս Շուշի։ Նոյն օրը Ադրբէյջանի կառավարութեան կազմակերպուած աւազակային խմբերը յարձակւում են Դիզակի շրջանի Դոլանլար հայկական գիւղի վրայ եւ հիմնովին աւերում են։ Անգլիական միսիան մի սպայ է ուղարկում Վարանդա՝ Սոկրատ բէկի մօտ, որպէսզի միասին գընան Դիզակ եւ տեղում ստուգեն այդ գիւղի աւերման պատճառները։

Այդ սպան ու Սոկրատ բէկն իր մի քանի ձիաւորներով, անցնում են մինչեւ Տող գիւղը։ (Դիզակ)։

Սակայն Դիզակի հրամանատար Ա-ն, երբ իմանում է, որ Սոկրատ բէկն էլ է այդ սպայի հետ, նրանց կանգնեցնում է Տող գիւղում եւ թոյլ չի տալիս առաջ անցնելու։ Դիզակի հրամանատարը առաջարկում է անգլիական սպային՝ երկու հարիւր ձիաւորներով երթալ այդ գիւղը՝ առանց Սոկրատի. բայց սպան չի համաձայնւում, որից յետոյ նրանք վերադառնում են։

Դիզակի հրամանատարի այս ձեւով վարուելու պատճառը այն է լինում, որ նա բաւական դժգոհ էր Սոկրատ բէկից, քանի որ Անդրանիկին խաբել էր եւ վերջին անգամ իրեն յանձնուած ծրագիրը չէր իրագործել. դորա